ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2025թ.

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N755-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն) և այլ իրավական ակտերով՝ կազմվել է Տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն): Հաշվետվությունն արտացոլում է հաշվետու տարում կատարված աշխատանքները, իրավիճակի զարգացումն ու փաստացի տվյալների համեմատականը նախորդ հաշվետու ժամանակաշրջանների հետ:

Տեսչական մարմինը գործում է ՀՀ Սահմանադրության, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների, իրավական այլ ակտերի և Կանոնադրության հիման վրա: Տեսչական մարմնի նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության, ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը: Տեսչական մարմնի խնդիրներն են՝ վերահսկողության ենթակա հինգ ոլորտներում ՀՀ օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն ու կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

2024 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների հետ միաժամանակ Տեսչական մարմինն իրականացրել է նաև չպլանավորված աշխատանքներ, մասնավորապես՝ պետական կառավարման համակարգի մարմիններից ստացված Տեսչական մարմնին վերապահված վերահսկողության ոլորտներին վերաբերող տեղեկատվության, քաղաքացիներից կամ տնտեսավարող սուբյեկտներից ստացված դիմումների, թեժ գծով ստացված զանգերի, զանգվածային լրատվամիջոցների մոնիթորինգի արդյունքների հիման վրա իրականացված, Տեսչական մարմնի կողմից

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

տնտեսավարող սուբյեկտներին տրված կարգադրագրերի հետևողականությանն ուղղված վարչական վարույթներ և վերստուգումներ, ինչպես նաև ՀՀ ներքին գործերի նախարարության պլանին համաձայն իրականացված՝ դեղերի շրջանառության ոլորտում նյութական պահուստին ներկայացվող պահանջների պահպանմանն ուղղված ստուգումներ:

I. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատումը ներկայացված է հավելված 1-ում:

II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսչական մարմնի գործունեության 2024 թվականի տարեկան ծրագրի կատարման ընթացքը ներկայացված է հավելված 2-ում:

III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Տեսչական մարմինը Կանոնադրության 10-րդ կետի համաձայն, օրենքով սահմանված դեպքերում և կարգով վերահսկողության ենթակա՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ապահովում է ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը վերահսկողության ենթակա ոլորտներում:

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտներում ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունն իրականացվել է Տեսչական մարմնի կողմից 2022-2024 թվականների ընթացքում իրականացված վերահսկողության արդյունքների հիման վրա՝ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության սկզբունքներն ապահովելու, ինչպես նաև՝ առավել ռիսկային ուղղությունների և խախտումների պարբերականության բացահայտման նպատակով:

Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 24-ի 14-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2024 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագրի շրջանակներում 2024 թվականի ընթացքում նախատեսվել էր իրականացնել թեմատիկ ստուգումներ 795 (ըստ հինգ ոլորտների 850) տնտեսավարող սուբյեկտների մոտ, որոնցից՝ 782 բարձր, 26 միջին և 42 ցածր ռիսկայնությամբ, որից հաշվետու ժամանակաշրջանում հրապարակվել է 795 հանձնարարագիր:

Տեսչական մարմնի կողմից հաշվետու տարում վերահսկողության ենթակա տնտեսավարող սուբյեկտներում ռիսկերի նվազեցման ուղղութունը միտված է եղել վերահսկողական աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելուն և թիրախների ընտրությանը, ինչպես նաև օրենքով նախատեսված իրավասությունների շրջանակներում տրված նախորդ ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի) պահանջների կատարման վերահսկողությանը:

Արդյունքում՝ 2024 թվականին 829 տնտեսավարող սուբյեկտներում իրականացվել և ավարտվել է ստուգում, այդ թվում՝ 223 վերստուգում (շուրջ 35%), ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ 14 նյութական պահուստի օրենսդրության պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված պահանջների պահպանման ապահովման նպատակով: Խախտումները վերացնելու նպատակով տրվել է 494 (այդ թվում վերստուգման՝ 42) հանձնարարական (կարգադրագիր):

2024 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների հետ միաժամանակ Տեսչական մարմինն իրականացրել է նաև չպլանավորված աշխատանքներ՝ օրենքով սահմանված կարգով հարուցվել է 2631 վարչական վարույթ, այդ թվում դիմումի հիման վրա՝ 694, Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 1937, որից 199-ը՝ կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով:

Ստուգումների վերաբերյալ տեղեկատվությունը (ըստ ոլորտի, ստուգման տեսակի, քանակի և հիմքի) առավել մանրամասն ներկայացված է Հաշվետվության V գլխում, իսկ վարչական վարույթների վերաբերյալ՝ VI գլխում:

«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում հանրային սննդի օբյեկտներում (որպես հատուկ թիրախային խումբ ընտրված կազմակերպություններ) ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչի օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակների առկայության և դրանց սահմանված պահանջների պահպանման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքում նկատվում է դրական միտում՝ նշված օբյեկտների կողմից խախտումները վերացնելու կամ խախտումները կանխարգելելու ուղղությամբ: Օրենքով սահմանված պահանջների նկատմամբ հետևողականությունը նկատելի է նաև այն հանրային սննդի օբյեկտներում, որտեղ վերահսկողություն չի իրականացվել:

Աշխատանքային իրավունքի բնագավառում Պետական եկամուտների կոմիտեի կողմից անօրինական աշխատանքի (առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի աշխատող) վերաբերյալ ստացվող բազմաթիվ տեղեկությունների հիման իրականացվող վարչական վարույթների արդյունքում գործատուներին տրվել են պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր՝ համապատասխան աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր

կնքելու վերաբերյալ, եթե վերահսկողության ընթացքում արձանագրվել է այդ անձանց տվյալ գործատուի մոտ ստուգման պահին փաստացի աշխատելու հանգամանքը:

Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում շինարարության ծավալների ավելացման հետ միաժամանակ ավելացել է դժբախտ դեպքերի թիվը: Արձանագրվել են նաև շինարարության ընթացքում կատարվող աշխատանքների արդյունքում հարակից բնակելի շինությունների բնակարաններում թափանցող աղմուկի մակարդակի գերազանցման դեպքերի թվի աճ:

Դեղերի շրջանառության ոլորտում իրականացված վերահսկողության արդյունքներով արձանագրվել են դեղերի ներմուծում իրականացնող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետություն օրենքի խախտմամբ (առանց ներմուծման կամ համապատասխանության հավաստագրի) դեղեր ներմուծելու և չգրանցված դեղեր ներմուծելու դեպքեր:

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում ՀՀ համայնքներում խմելու ջրի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքում պարզվել է, որ մի շարք դեպքերում տվյալ բնակավայրերում խմելու ջրի ջրամատակարարման համակարգերը չեն շահագործվում ինչպես համայնքների, այնպես էլ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից: Արդյունքում՝ համայնքի ղեկավարներին տրվել են կարգադրագրեր՝ բնակչությանը սանիտարական կանոններին համապատասխան խմելու ջրով ապահովելու կամ քաղաքացիների կողմից խմելու նպատակով ջրօգտագործման դադարեցման վերաբերյալ:

IV. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում ըստ վերահսկողության ենթակա ոլորտների իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ՝ թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման նպատակով: Թեժ գծով ստացվող զանգերին տրվել են պատասխաններ և

պարզաբանումներ: Խորհրդատվական գործունեության շրջանակներում լուսաբանվել են ոլորտներին վերաբերող ընդհանուր բնույթի հարցեր, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, հարցերին տրվել է հստակ պատասխան կամ պարզաբանում՝ իրականացնելով 10001 (2023թ.՝ 6613, 2022թ.՝ 6487) խորհրդատվական աշխատանք, որից 2059՝ տնտեսավարող սուբյեկտներին տրված խորհրդատվություն և գրություն, 7824 (2023թ.՝ 5252, 2022թ.՝ 5635)՝ «Թեժ գիծ» ծառայութամբ ստացված հարցերի պատասխան և պարզաբանում և 118՝ ֆեյսբուքյան էջով ստացած հարցերի պատասխան:

Տեսչական մարմնի կողմից իրականացված խորհրդատվություն

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են հետևյալ խորհրդատվական աշխատանքները.

- ստաֆիլակոկարության վերաբերյալ գրություններ՝ անձին ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու վերաբերյալ,
- գրություններ դպրոցական և նախադպրոցական կազմակերպությունների ղեկավարներին՝ «Ջրծաղիկ» հիվանդության դեպքերի տեղայնացման և վարակի հետագա տարածումը կանխարգելելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի ապրիլի 19-ի թիվ 1148-Ա և ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 1254-Ա հրամանների պահանջների պահպանման վերաբերյալ,
- գրություններ դպրոցի տնօրեններին՝ դպրոցներում օդի ջերմաստիճանի ցուցանիշները սանիտարական կանոններով և նորմերով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար,
- գրություններ համայնքների ղեկավարներին՝ խմելու ջրի հետազոտության արդյունքում արձանագրված շեղումների վերաբերյալ,
- տեղեկատվություն տնտեսավարող սուբյեկտներին՝ Տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ,

- դեղատնային գործունեություն իրականացնող կազմակերպություններին իրազեկվել է կեղծ, չգրանցված, ոչ օրինական ճանապարհով ձեռք բերված, անորակ կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանելիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաված, դեղատոմսով բաց թողնվող դեղերի առանց դեղատոմսի բացթողում և իրացում չիրականացնելու վերաբերյալ և դեղատոմսով բաց թողնվող դեղերի դեղատոմսերի լրացումը, դուրսգրումը և իրացումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ձևաթղթերով,

- գործատուների հետ քննարկվել են վերջիններիս կողմից ուղարկված նախնական և պարբերական բուժզննման ենթակա աշխատակիցների ցանկերը՝ ՀՀ կառավարության 2004 թվականի 1089-Ն որոշման պահանջներն ապահովելու նպատակով, արդյունքում՝ ճշտված և համաձայնեցված ցանկերը վերադարձվել են գործատուներին,

- Տեսչական մարմնի աշխատակիցները կազմակերպել են մի շարք իրազեկման սեմինար-քննարկումներ՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող տարբեր կազմակերպությունների ղեկավարների, աշխատակիցների, ինչպես նաև ՀՈԱԿ-ների տնօրենների, բժշկական կենտրոնների բուժանձնակազմի և այլ տնտեսավարողների համար,

- քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների հարցերին տրվել են պարզաբանումներ և պատասխաններ,

- վերահսկողական գործընթացում (ստուգում, վարույթ) մշտապես իրականացվել են խորհրդատվական և իրազեկման աշխատանքներ, տնտեսավարող սուբյեկտներին տրվել է Տեսչական մարմնի լիազորությունների և վերահսկողության ոլորտներին առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն:

Տնտեսավարողների կողմից բարձրացված հարցերի մեծ մասը վերաբերել է.

- աշխատանքի էական պայմանները փոփոխելու հիմքին և ընթացակարգին,
- աշխատանքից ազատման համար սահմանված ընթացակարգերին,
- ամենամյա արձակուրդի տրամադրման կարգին,
- նպատակային արձակուրդների տրամադրմանը,

- արտաժամյա աշխատանքի համար սահմանված հավելումների հաշվարկմանը,
- աշխատանքի պայմանների և աշխատողների իրավունքների պահպանմանը,
- աշխատավայրում անվտանգության տեխնիկական կանոնակարգերին, հրահանգավորմանը,
- բժշկական զննությունների անցկացման ընթացակարգերին:

«Թեժ գիծ» ծառայություն

Տեսչական մարմնի «Թեժ գիծ» ծառայությամբ 2024 թվականին ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ստացվել է 7824 զանգ և 118 Ֆեյսբուքյան հարցում, 2572 զանգով ավել 2023 թվականի 5252 զանգի համեմատ:

«Թեժ գծով» ստացված զանգերի բաշխումն ըստ ոլորտների՝

- Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 3541 (45%),
- Բնակչության շրջանում սանիտարահամաճարակային անվտանգության ոլորտում՝ 335 (4%),
- Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 104 (1 %),
- Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 106 (2%)
- Տեղեկատվություն՝ 2272 (29%),
- ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 1465 (19%),
- Առաջարկ՝ 1 (0%):

Հաշվետու ժամանակահատվածում զանգերի ընդհանուր ուսումնասիրության արդյունքը ցույց է տվել, որ քաղաքացիների հարցերի 45%-ը, այսինքն՝ զանգերի մեծ մասը, վերաբերել են աշխատանքային իրավահարաբերություններին, 29%-ը կրել են տեղեկատվական բնույթ:

Եղել են զանգեր Տեսչական մարմնի ստուգումների, հարուցված վարչական վարույթների, դիմում-բողոքների վերաբերյալ:





ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Իրազեկման միջոցառումների իրականացում

Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների շրջանակներում՝ իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ են կազմակերպվել մամուլի հաղորդագրությունների տեսքով, «Թեժ գիծ» ծառայությունով, հարցազրույցների ու ասուլիսների կազմակերպմամբ, մարզային և մայրաքաղաքում կազմակերպված ֆոկուս խմբերի հետ իրազեկման սեմինարների միջոցով:

Հանրությանն ու տնտեսավարող սուբյեկտներին մշտապես իրազեկվել է Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում ընդունված նոր իրավական ակտերի և գործող իրավական ակտերում կատարված փոփոխությունների մասին:

Հրապարակվել են կեղծ դեղերի ահազանգներ, տրվել են Կարգադրագրեր՝ դեղի շրջանառությունը ՀՀ-ում դադարեցնելու և հետկանչի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի վերահսկման ոլորտներում իրականացվել է իրազեկման 379 աշխատանք, ստորև նշված ուղղություններով, այդ թվում ըստ ոլորտների 83 իրազեկման սեմինարներ.

- բնակչության շրջանում սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում՝ 30,
- աշխատանքի վերահսկողության ոլորտում՝ 36,
- բժշկական օգնության և սպասարկման նկատմամբ վերահսկողության ոլորտում՝ 40,
- դեղերի շրջանառության վերահսկողության ոլորտում՝ 23,
- նկարահանում-հաղորդման հյուր՝ 7,
- ոլորտային իրազեկումներից զատ կատարված այլ աշխատանքներ՝ 243

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107





ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

	բնակչության սանիտարահամաճ. անվտանգության ապահովման	աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատ. առողջ. պահպանման և անվտանգ.	դեղերի շրջանառության	բժշկական օգնութ. և սպասարկ.	այլ
2022թ.՝ 292	59	67	6	26	134
2023թ.՝ 190	13	19	18	10	130
2024թ.՝ 379	30	36	23	40	250

Կանխարգելիչ գործողություն

Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների շրջանակներում՝ իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ իրականացվել է 10380 կանխարգելիչ միջոցառումներ, որից՝ 379 իրազեկման աշխատանքներ տնտեսավարող սուբյեկտների շրջանում և հանրության համար, 10001 խորհրդատվական գործունեություն: 10001 խորհրդատվական գործունեությունից 2059-ը՝ տնտեսավարող սուբյեկտներին տրված խորհրդատվություններ և գրություններ, 7942-ը՝ «Թեժ գիծ» ծառայութամբ մուտքագրված զանգերի և Ֆեյսբուքյան էջով ստացված հարցերի պատասխաններ և պարզաբանումներ:

V. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել է 1076 հանձնարարագիր ստուգում և վերստուգում իրականացնելու համար, որից 823 ստուգում, 253 վերստուգում: Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել է 829 ստուգում (այդ թվում վերստուգում՝ 223), որից՝ 552 ստուգման ակտ, 249 ստուգման տեղեկանք, 21-ը ուժը կորցրած է ճանաչվել , 7-

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

ը չեղյալ է ճանաչվել, իսկ 247 ստուգում հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ ընթացքի մեջ է: 2023 թվականին հրապարակված հանձնարարագրերից 121 ստուգում (92՝ ստուգում, որից 3-ը՝ նյութական պահուստ և 29՝ վերստուգում) ավարտվել է 2024 թվականին: Ստուգման արդյունքում տրվել է խախտումների և թերությունների վերացման 560 հանձնարարական (կարգադրագիր), որից 66-ը՝ 2023 թվականի ստուգումներից:

Տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրով՝ ըստ 5 ոլորտների նախատեսված էր իրականացնել ստուգում 795 (ըստ հինգ ոլորտների 850) տնտեսավարող սուբյեկտների մոտ, որից հաշվետու ժամանակաշրջանում հրապարակվել է 795 հանձնարարագիր, ինչպես նաև՝ 28 հանձնարարագիր նյութական պահուստի օրենսդրության պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված պահանջների պահպանման ապահովման նպատակով:



Իրականացված ստուգումներ ըստ վերահսկողության ենթակա ոլորտների

2024 ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ							
ՈԼՈՐՏ	Հանձնարարագիր	**Ստուգման արդյունքներ**					**Կարգադրագիր**
		Ակտ	Տեղեկանք	Ուժը կորցրած ճանաչել	Չեղյալ ճանաչելու մասին	Ընթացքի մեջ	
Աշխատանքային իրավունք	**171**	123	9	0	1	38	109
Աշխատանքի անվտանգություն	**153**	106	16	6	0	25	88
Բժշկական օգնության և սպասարկման	**42**	11	3	0	0	28	10
Դեղերի շրջանառության	**189**	113	6	3	3	64	106
Բնակչության սանիտարահամաճ. անվտ.	**187**	121	33	10	3	20	117
Աշխատանքային անվտանգություն, Աշխ. իրավունք	**12**	10	0	0	0	2	10
Բժշ. օգն. և սպաս, Բնակ. սանիտարահամ	**30**	10	1	0	0	19	7
Բժշ. օգն. և սպաս, Դեղերի շրջ.	**2**	0	0	0	0	2	0
Դեղերի շրջ., Բնակ. սանիտարահամ. անվտ.	**7**	3	0	0	0	4	3
Բժշ. օգն. և սպաս, Դեղերի շրջ, Բնակ. սանիտարահամ. անվտ	**1**	0	0	0	0	1	0
Բնակ. Սանիտարահամ, շրջ, Աշխ. անվտանգություն, Աշխ. իրավունք	**1**	1	0	0	0	0	1
Նյութական պահուստ	**28**	2	11	1	0	14	1
Ընդամենը	**823**	500	**79**	**20**	**7**	**217**	**452**

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ							
ՈԼՈՐՏ	Հանձնարարագիր	**Ստուգման արդյունքներ**					**Կարգադրագիր**
		Ակտ	Տեղեկանք	Ուժը կորցրած ճանաչել	Չեղյալ ճանաչելու մասին	Ընթացքի մեջ	
Աշխատանքային իրավունք	**27**	**2**	**20**	**0**	**0**	**5**	**2**
Աշխատանքի անվտանգություն	**53**	**10**	**38**	**1**	**0**	**4**	**8**

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Բժշկական օգնության և սպասարկման	**24**	**8**	**16**	**0**	**0**	**0**	**5**
Դեղերի շրջանառության	**32**	**16**	**13**	**0**	**0**	**3**	**14**
Բնակչության սանիտարահամաճ. անվտ.	**76**	**9**	**64**	**0**	**0**	**3**	**8**
Աշխատանքային անվտանգություն, Աշխ. իրավունք	**5**	**0**	**2**	**0**	**0**	**3**	**0**
Բժշ. օգն. և սպաս, Բնակ. սանիտարահամ	**21**	**5**	**14**	**0**	**0**	**2**	**4**
Բժշ. օգն. և սպաս, Դեղերի շրջ.	**2**	**0**	**2**	**0**	**0**	**0**	
Դեղերի շրջ., Բնակ. սանիտարահամ. անվտ.	**1**	**0**	**1**	**0**	**0**	**0**	**0**
ՊՎԾ (դեղ)	**10**	**0**	**0**	**0**	**0**	**10**	**0**
Քր.դատ (Քննիչի որոշմամբ)՝ դեղ/բուժ	**2**	**2**	**0**	**0**	**0**	**0**	**1**
Ընդամենը	**253**	**52**	**170**	**1**	**0**	**30**	**42**

ԸՆԴԱՄԵՆԸ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ/ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

ՈԼՈՐՏ	Հանձնարարագիր	**Ստուգման արդյունքներ**					**Կարգադրագիր**
		Ակտ	Տեղեկանք	Ուժը կորցրած ճանաչել	Չեղյալ ճանաչելու մասին	Ընթացքի մեջ	
Աշխատանքային իրավունք	**198**	125	29	0	1	43	111
Աշխատանքի անվտանգություն	**206**	116	54	7	0	29	96
Բժշկական օգնության և սպասարկման	**66**	19	19	0	0	28	15
Դեղերի շրջանառության	**221**	129	19	3	3	67	120
Բնակչության սանիտարահամաճ. անվտ.	**263**	130	97	10	3	23	125
Աշխատանքային անվտանգություն, Աշխ. իրավունք	**17**	10	2	0	0	5	10
Բժշ. օգն. և սպաս, Բնակ. սանիտարահամ	**51**	15	15	0	0	21	11
Բժշ. օգն. և սպաս, Դեղերի շրջ.	**4**	0	2	0	0	2	0
Դեղերի շրջ., Բնակ. սանիտարահամ. անվտ.	**8**	3	1	0	0	4	3

Բժշ. օգն. և սպաս, Դեղերի շրջ, Բնակ. սանիտարահամ. անվտ	**1**	0	0	0	0	1	0
Դեղերի շրջ, Աշխ. անվտանգություն, Աշխ. իրավունք	**1**	1	0	0	0	0	1
Նյութական պահուստ	**28**	2	11	1	0	14	1
ՊՎԾ (դեղ)	**10**	0	0	0	0	10	0
Քր.դատ (Քննիչի որոշմամբ)՝ դեղ/բուժ	**2**	2	0	0	0	0	1
Ընդամենը	**1076**	552	**249**	**21**	**7**	**247**	**494**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց աշխատակիցների նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ ընդունվել է 712 որոշում տույժ նշանակելու մասին, ընդհանուր 1.731.781.412 ՀՀ դրամի չափով, 376՝ նախազգուշացում:



ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

VI. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Տեսչական մարմնում 2024 թվականի ընթացքում ստացվել է 864 (2023թ՝ 833, 2022թ՝ 699) դիմում և բողոք, որոնցից օրենքով սահմանված կարգով 23-ը վերադարձվել է, 38-ը վերահասցեագրվել է, 109-ին տրվել է համապատասխան պարզաբանում, 694 դիմումի հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ: Այսպես, ըստ ոլորտների.



Օրենքով սահմանված կարգով հաշվետու տարում Տեսչական մարմնի կողմից հարուցվել է 2631 վարչական վարույթ, այդ թվում դիմումի հիման վրա՝ 694, Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 1937, որից 199-ը՝ կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով:

Հարուցված 511 վարչական վարույթի արդյունքում տրվել է խախտումները վերացնելու նպատակով տրվել են առաջադրանք տալու վերաբերյալ կարգադրագրեր, 1986 վարույթ կարճվել է, այդ թվում՝ 169-ը՝ դիմումից հրաժարվելու հիմքով, իսկ մնացածն ընթացքի մեջ է:

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107





	բնակչության սանիտարահամաճ. անվտանգ. սպասարկմ.	աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջ. պահպանման	դեղերի շրջանառության	բժշկական օգնության և սպասարկման
2022թ.՝ 2066	341	1245	255	225
2023թ.՝ 3501	500	1474	140	1387
2024թ.՝ 2631	559	1323	141	608

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Հարուցված վարչական վարույթների արդյունքում, տնտեսավարող սուբյեկտների և դրանց աշխատակիցների նկատմամբ՝ որպես պատասխանատվության միջոց, ընդունվել է տույժ նշանակելու մասին 1222 որոշում, ընդհանուր 3.614.326.264 ՀՀ դրամի չափով, 196՝ նախազգուշացում:



VII. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐ ԵՆ ՀԱՆՎԵԼ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Տեսչական մարմնի կողմից իրականացած վերահսկողության արդյունքների վերլուծությամբ պարզվել է, որ վերահսկողության բոլոր ոլորտներում առանձնանում են օրենսդրական մի շարք պահանջներ, որոնց խախտումներն առավել հաճախ են հանդիպում: Այսպես.

Դեղերի շրջանառության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

- ✓ ՀՀ-ում չգրանցված դեղեր ներմուծելը,
- ✓ դեղերն օրենքի խախտմամբ ներմուծելը,
- ✓ չգրանցված կամ օրենքի խախտմամբ ներմուծված դեղեր իրացնելը,
- ✓ դեղատոմսեր չգրելը և դեղատոմսով բաց թողնվող դեղերն առանց դեղատոմսի բաց թողնելը,
- ✓ լիցենզիայի պայմանների և պահանջների խախտումները:

Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

- ✓ լիցենզիայի պայմանների և պահանջների խախտումները,
- ✓ բժշկական փաստաթղթերի թերի լրացումը,
- ✓ «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների խախտումները,
- ✓ առանց համապատասխան ՇՄՋ հավաստագրի աշխատանքի թույլատրելը:

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

- ✓ աղմուկի՝ օրենսդրությամբ թույլատրելի մակարդակների գերազանցումը,
- ✓ խմելու ջրամատակարարման համակարգին ներկայացվող պահանջների խախտումները,
- ✓ բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջների խախտումները,
- ✓ պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգի խախտումները:

Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

- ✓ աշխատողներին աշխատանքի կոլեկտիվ և անհատական պաշպանության միջոցների տրամադրման և կիրառման խախտումները,
- ✓ աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողների առողջական վիճակի պարտադիր

նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության անցկացման կարգը խախտելը,

- ✓ կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերին ներկայացվող սանիտարական նորմերի և կանոնների խախտումները,
- ✓ աշխատավարձ և վերջնահաշվարկ չվճարելը կամ ժամկետանց վճարելը,
- ✓ օրենքով սահմանված կարգով և ժամկետում աշխատանքային պայմանագրեր չկնքելը,
- ✓ նվազագույն աշխատավարձը չպահպանելը:

VIII. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել է 26 առաջարկություն (2023թ.՝ 29): Միաժամանակ, քննարկվել և կարծիք է ներկայացվել տարբեր գերատեսչությունների կողմից ներկայացված 39 նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ (2023թ.՝ 28):

IX. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Տեսչական մարմնի դեմ բերվել է 520 բողոք, որից 205 բողոք՝ Տեսչական մարմին, 315 բողոք՝ դատարան:

Հաշվետու տարվա ընթացքում կայացվել է 362 վճիռ/որոշում՝ դատարան բողոքարկված գործերի վերաբերյալ, որից 237-ը՝ ի օգուտ բողոքաբերի (65,5%): 2023թ. կայացվել էր 224 վճիռ/որոշում, որից 143-ը՝ ի օգուտ բողոքաբերի (63,8%): 2022թ. կայացվել էր 148 վճիռ/որոշում, որից 107-ի դեպքում՝ ի օգուտ բողոքաբերի (72,3%):

Ներկայացված բողոքները վերաբերվել են օրենքով սահմանված վարչական վարույթի ընթացակարգային նորմերի խախտումներին, մասնավորապես՝ վարչական ակտ կայացնելիս գործում առկա ոչ բոլոր նյութերն են օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրվել, չեն հավաքագրվել և հաշվի առնվել բոլոր վերաբերելի ապացույցները, հաշվի չի առնվել իրավախախտի մեղքի բացակայությունը, վարչական ակտերը չեն եղել որոշակի և հստակ, լսված լինելու իրավունքի խախտումներ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է առանց իրավախախտողի ներկայության: Առկա են եղել նաև ոլորտային բնույթի խախտումների վերաբերյալ բողոքներ:

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107